ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐԴԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՋԱՆԳՈՋՅԱՆ

ՍԱԿԱԳՆԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ (ՀՀ ՆՅՈՒԹԵՐՈՎ)

Ը. 00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Այվազի Գևորգյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վարդան Ալբերտի Սարգսյան
	տնտեսագիտության թեկնածու Աննա Վլադիկի Մարգարյան
Առաջատար կազմակերպություն՝	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի հունիսի 9-ին ժամը 15^{30}-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. մայիսի 6-ին:

014 մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Գևորգյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ջրային ռեսուրսները և ջրային համակարգերը կարևոր նշանակություն ունեն յուրաքանչյուր երկրի տնտեսության կայուն գործունեության համար և դրանց արդյունավետ կառավարումը լուրջ խնդիր է գրեթե բոլոր պետությունների համար: Տնտեսական զարգացման ներկա պայմաններում շատ երկրներ, որոնք իրականացնում են սոցիալ-տնտեսական բնույթի բարեփոխումներ հանդիպում են մի շարք դժվարությունների արտադրական, սոցիալական և շուկայական ենթակառուցվածքների օբյեկտների արդիականացման բնագավառներում: Դրա գիտականորեն հիմնավորված իրականացումն առավել արդիական և հրատապ է այն ոլորտներում, որոնք ապահովում են բնակչության նորմալ կենսագործունեության և հասարակական բարեկեցության պահանջմունքների բավարարումը: Այս տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունի ջրային տնտեսության ոլորտը, որը տնտեսական բարեփոխումների արդի փուլում կողմնորոշված է ոլորտին վերաբերող համալիր հիմնախնդիրների օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորմանը, հատկապես այն հարցերի շուրջ, որոնք վերաբերում են ջրօգտագործման վճարների ու ջրամատակարարման և ջրահեռացման սակագների օպտիմալացմանը:

Ջրամատակարարման և ջրահեռացման սակագների կարգավորումը առավել հրատապ է Հայաստանի Հանրապետությունում, քանի որ այս ոլորտին բնորոշ են և դրա հիմքում են նաև էկոլոգիական հիմնախնդիրները:

Էկոլոգատնտեսական տեսանկյունից չհիմնավորված ջրօգտագործման վճարները, ջրամատակարարման ու ջրահեռացման սակագները հանգեցնում են այնպիսի բացասական ազդեցությունների, որոնց հետևանքով ջրային ռեսուրսներն ու համակարգերն օգտագործվում են անտնտեսվար և անհաշվենկատ՝ առանց հաշվի առնելու դրանց վերականգնման և օգտագործման ծախսերը, ինչպես նաև բնապահպանական պահանջները: Այս խնդիրն ազդում է նաև ջրամատակարաման ու ջրահեռացման ծառայություններ մատուցող ընկերությունների կենսունակության և ֆինանսական վիճակի վրա, քանի որ գոյացած հասույթը բավարար չէ անհրաժեշտ ծախսերը իրականացնելու համար, սա էլ իր հերթին հանգեցնում է պետական բյուջեի միջոցների շարունակական օգտագործմանը:

Հետևաբար ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման ու հսկողության հիմնախնդիրն անհրաժեշտ է դիտարկել հատկապես գիտական այն համատեքստում, որը կողմնորոշված է ջրամատակարաման և ջրահեռացման ոլորտներում սակագների որոշման մեթոդաբանության կատարելագործմանը՝ դարձնելով դրանք սոցիալապես ընդունելի, տնտեսապես հիմնավորված և էկոլոգիապես արդարացված:

Վերջին տարիներին ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի հիմնախնդիրներին նվիրված իրականացվել են մի շարք հետազոտություններ: Այդ աշխատանքներում հիմնականում հետազոտվել են ջրային ռեսուրսների և համակարգերի որևէ ոլորտ, ինչպես նաև տնտեսական մեխանիզմի առանձին բաղադրիչներ և առաջարկվել են դրանց հետ կապված համապատասխան լուծումներ: Ներկայացված ատենախոսությունում կատարվել է ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտների սակագների սահմանման, հիմնախնդիրների հետազոտություն և առաջարկվել են դրանց հետ կապված համապատասխան պրակտիկ լուծումներ:

ՀՀ ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում սակագնի սահմանման հիմնախնդիրների լուծման կարևորությունը և հրատապությունը պայմանավորել են ատենախոսության թեմայի ընտրությունը, որոշել նրա նպատակներն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, կառուցվածքն ու տրամաբանությունը:

Ատենախոսությունում հետազոտվել են Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում գործող ընկերությունների համար սահմանված սակագների կառուցվածքը, պետական կարգավորումը, սահմանման մեթոդաբանությունը, ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտների ինստիտուցիոնալ կառուցվածքը, առկա հիմնախնդիրները և դրանց բարելավման ուղիները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է հետազոտել և վերլուծել Հայաստանի Հանրապետության ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում սակագնի սահմանման հիմնախնդիրները և առաջադրել սակագնի սահմանման էկոլոգատնտեսական տեսանկյունից գիտականորեն հիմնավորված մոտեցում:

Նշված նպատակի իրականացման համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտների արդի վիճակը և բացահայտել զարգացման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում,
- վերլուծել բնապահպանական և բնօգտագործման վճարների սահմանման մեթոդաբանությունը, բացահայտել դրանց սահմանման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում,
- իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում միջազգային փորձի վերլուծություն,
- ուսումնասիրել ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտների ինստիտուցիոնալ կառուցվածքը և առանձնահատկությունները, ինչպես նաև ներկայացնել այդ կառուցվածքի բարեփոխմանն ուղղված առաջարկություններ,

- ուսումնասիրել ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում գործող ընկերությունների համար սահմանված սակագների կառուցվածքը, պետական կարգավորումը, սահմանման մեթոդաբանությունը և ներկայացնել առաջարկություններ դրանց կատարելագործման վերաբերյալ,
- քննության առնել ջրային համակարգերի կառավարմանը մասնավոր ընկերությունների մասնակցության հնարավորությունները, հեռանկարները և հիմնավորել ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում ջրային համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման ձևի նպատակահարմարությունը:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության առարկան է ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում սակագնի սահմանման հիմնահարցերը և բարելավման միջոցառումները:

Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերն են:

Ատենախոսության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծման համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել ՀՀ և արտասահմանյան տնտեսագետների ուսումնասիրությունները, մասնավորապես, ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում սակագնի և տնտեսական խթանման, ինստիտուցիոնալ կառուցվածքի հիմնախնդիրներին նվիրված աշխատությունները:

Աշխատանքի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալները, միջազգային տարբեր կազմակերպությունների տեղեկագրերը և փորձագիտական գնահատականները, հետազոտությունների արդյունքները, Հայաստանի Հանրապետության և այլ երկրների օրենսդրական և նորմատիվային ակտերը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, ինչպես նաև ջրամատակարար կազմակերպությունների կողմից տրամադրված նյութերը:

Ուսումնասիրությունների գործընթացում կիրառվել են համեմատական, համակարգային, վիճակագրական վերլուծության, պատճառահետևանքային կապերի ու գրաֆիկական պատկերացման մեթոդները, ինչպես նաև տեղեկատվության հավաքման և մշակման այլ մեթոդներ:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն տեսական, մեթոդական և կիրառական ուղղվածություն, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

1. Հիմնավորվել է հանրային-մասնավոր գործընկերության

շրջանակներում ջրամատակարար ընկերությունների կառավարման ձևի փոփոխման անհրաժեշտությունը և օպտիմալ կառուցվածքը, որի դեպքում առաջարկվում է ներդնել ջրամատակարարման և ջրահեռացման միասնական (համընդհանուր) սակագին: Սակագնի որոշման համար մշակվել է սակագների կանխատեսման մոդել՝ հիմնված հասույթների պահանջի կանխատեսումների հիման վրա:

2. Առաջարկվել է փոփոխել ջրային ռեսուրսների կառավարման ինստիտուցիոնալ կառուցվածքը, մասնավորապես ջրային համակարգերի կառավարման մարմնի կազմում առանձին միավորի ստեղծում, որը կտնօրինի ջրամատակարարման և ջրահեռացման ընկերությունների բոլոր ակտիվները ինչպես նաև կիրականացնի ռազմավարական գործառույթ:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը: Ատենախոսությունում առաջադրված Հայաստանի Հանրապետության ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում սակագնի սահմանման հիմնահարցերի լուծման ու ոլորտի բարելավման ուղիները կարող են օգտակար լինել ՀՀ ջրամատակարաման և ջրահեռացման ոլորտի զարգացման համար: Առաջարկված ուղիները մեր հանրապետության համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից կարող են օգտագործվել ջրային հարաբերություններում գործունեության զարգացման ուղղությամբ տնտեսական քաղաքականության մշակման ընթացքում: Ատենախոսության տեսական և գործնական որոշ արդյունքներ կարող են օգտակար լինել նաև հիմնախնդիրն ուսումնասիրող տնտեսագետներին, տնտեսվարող սուբյեկտներին, ինչպես նաև շահագրգիռ այլ անձանց:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները, մեթոդական մշակումները և առաջարկությունները ներկայացվել և քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի <<Բնօգտագործման տնտեսագիտություն>> ամբիոնում: Ատենախոսության թեմայի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների որոշ հիմնական արդյունքներ արտացոլված են հեղինակի չորս գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքի կառուցվածքը բխում է հետազոտության նպատակից և խնդիրներից: Այն բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածներից: Ատենախոսության ծավալը, ներառյալ գրականության ցանկը, կազմում է 140 էջ: Աշխատանքը պարունակում է տեղեկատվական, վերլուծական և հաշվարկային 8 աղյուսակներ ու 18 գծապատկերներ: Աշխատանքում ներառված են թվով 10 հավելվածներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***ներածության*** մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ցույց է տրված դրա մշակվածության աստիճանը, սահմանված են հետազոտության նպատակները և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպված է գիտական նորույթը, ներկայացված են աշխատանքի գիտագործնական ու կիրառական նշանակությունը, հետազոտության փորձարկումը և հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

«Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտների արդի վիճակը ՀՀ-ում» վերնագրով առաջին գլխում ներկայացվում է ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտների արդի վիճակը և բացահայտվում զարգացման առանձնահատկությունները, վերլուծվում են բնապահպանական և բնօգտագործման վճարների սահմանման մեթոդաբանությունը, վեր է հանվում դրանց սահմանման հիմնախնդիրները, ինչպես նաև իրականացվում է ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում միջազգային փորձի վերլուծություն:

Բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կոչված են ապահովելու մարդու կենցաղային և տնտեսական գործունեությունը, բավարարելու նրա կենսական պահանջները, ինչպես նաև պահպանելու խմելու ջրի սանիտարական մաքրության և շրջակա միջավայրի բնապահպանական պահանջները:

ՀՀ տարածքում կենտրոնացված կարգով խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտներում գործում են 5 խոշոր ջրամատակարարման և ջրառեռացման ծառայություններ մատուցող կազմակերպություններ (“Երևան Ջուր”ՓԲԸ, “Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ, “Նոր Ակունք” ՓԲԸ, “Լոռի-ջրմուղկոյուղի”ՓԲԸ, “Շիրակ-ջրմուղկոյուղի” ՓԲԸ): Հանրապետությունում առկա են բազմաթիվ գյուղական բնակավայրեր, որոնց ջրամատակարարումն իրականացվում է համապատասխան համայնքների ուժերով կամ համայնքային նշանակության կազմակերպությունների միջոցով: Այս համայնքներում դեռևս հստակեցված չեն ջրամատակարարման ծառայությունների իրականացման հետ կապված սակագնային, նվազագույն ջրամատակարարման ռեժիմին վերաբերող և այլ խնդիրներ, ինչպես նաև հիմնականում ձևավորված չեն ինստիտուցիոնալ կառույցները, որոնք պետք է պատասխանատվություն կրեին ջրային համակարգերի կառավարման և շահագործման համար:

ՀՀ-ում վերջին տարիներին ավելացել են բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով պետական բյուջեի մուտքերը, սակայն դա չի նշանակում, թե համակարգը գործում է աղյունավետորեն: Աղյուսակ 1-ից երևում է, որ բնօգտագործման վճարները ջրային ռեսուրսների ոլորոտում սակագնի

կառուցվածքում փոքր մաս են կազմում, իսկ որոշ դեպքերում ընդհանրապես չեն կիրառվում:

Աղյուսակ 1

ՀՀ-ում սպառողների տարբեր խմբերի կողմից վճարվող ջրօգտագործման վճարները , դրամ/մ³[1]

Ջրային ռեսուրսը	Օգտագործման նպատակը							
	Ոռոգում		Հիդրոէներգետիկա		Արդյունաբերական		Խմելու և կենցաղային	
	Ջրօգտ. վճար	Սակագին	Ջրօգտ. վճար	վճար	Ջրօգտ. վճար	վճար	Ջրօգտ. վճար	Սակագին
Մակերևութային ջրեր (բացառությամբ Սևանա լճից)	0.0	11	-	-	0.5	0.5	0.5	Շուրջ 180
Սևանա լճից	0.2	11	-	-	1.5	1.5	-	-
Խմելու համար պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրեր	1.0	11	-	-	1.0	1.0	1.0	Շուրջ 180
Խմելու համար ոչ պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրեր	0.0	11	-	-	1.0	1.0	-	-

Մեր հանրապետությունում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում գործող սակագները նույնպես զգալիորեն ավելի ցածր են, քան այլ համեմատելի երկրներում և քաղաքներում (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Ջրամատակարարման և ջրահեռացման սակագները ըստ քաղաքների (ՀՀԴ)[2]



Ըստ Եվրոպական բնապահպանական գործակալության տվյալների Անգլիայում, Ուելսում, Շոտլանդիայում, Նիդերլանդներում, Ֆրանսիայում, Գերմանիայում և Իսպանիայում առկա սակագները գտնվում են 100 Եվրո/տարի մեկ ՏՏ հաշվով (Նիդերլանդներ) մինչև մոտ 400 Եվրո/տարի մեկ ՏՏ հաշվով (Անգլիա, Ուելս, Շոտլանդիա և Գերմանիա) միջակայքում, ընդ որում Ֆրանսիայում, Նիդերլանդներում, Անգլիայում և Ուելսում ծախսածածկումը կազմում է 100%, իսկ Իսպանիայում, Կիպրոսում և Իտալիայում՝ մոտ 50%[3]:

[1] <<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին> ՀՀ օրենք (ընդ. 28.12.1998 թ.), <Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին> ՀՀ օրենք (ընդ. 20.12.2006 թ.), Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, www.psrc.am,

[2] The international benchmarking network for water and sanitation utilities http://www.ib-net.org/en/tariffs_map.php,

[3] Assessment of cost recovery through water pricing, European Environment Agency, 2013, 123 p,էջ 54, 63

«Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտների կարգավորման տնտեսական մեխանիզմները» վերնագրով երկրորդ գլխում ուսումնասիրվում են ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում հանրային-մասնավոր համագործակցության զարգացման հնարավորությունները, ներկայացվում են ջրային ռեսուրսների տնտեսական գնահատման առանձնահատկությունները: Երկրորդ գլխում ուսումնասիրվում են նաև ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում սակագների կարգավորումը և հաշվարկման մեթոդաբանությունը:

Ջրի սակագների սահմանման գլխավոր շարժառիթը ընկերություններին հնարավորություն տալն է, որ վերադարձնեն ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման ընթացքում առաջացած ծախքերը: Սակագների սահմանման գործընթացի հիմնական քայլերը ներկայացված են Գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2

Սակագների սահմանման գործընթացը[4]



Հասույթների պահանջը որոշվում է ընկերության հասույթը համեմատելով իր գործառնական և կապիտալ ծախքերի հետ՝ որոշելու ընթացիկ սակագների համարժեքությունը ծախքերին փոխհատուցման առումով:

Գծապատկեր 3

Հասույթների պահանջների հաշվարկի սխեմա[5]



Հասույթների պահանջների հաշվարկի ընդհանուր մեխանիզմը բերված է գծապատկեր 3-ում:

[4] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից
[5] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից

ՀՀ-ում ՋևՋ ծառայություններ մատուցող ընկերությունների սակագներից ստացվող հասույթը ծածկում է շահագործման ծախսերի մոտավորապես 67 %-ը (գծապատկեր 4), չնայած սակագները սկսած 2001 թվականից բավականին աճել են (աղյուսակ 2), տարեկան կտրվածքով առաջացնելով մոտավորապես 6 միլիարդ ՀՀ դրամի պակասուրդ:

Գծապատկեր 4

ՋևՋ ծառայություններ մատուցող ընկերությունների ծախսերի համեմատությունը սակագներից ստացված հասույթների հետ (մլրդ. դրամ) (2012 թ.)[6]



Աղյուսակ 2

Ջրամատակարարում և ջրահեռացում իրականացնող կազմակերպությունների սակագները[7]:

N/N	Կազմակերպության անվանումը	Սակագինը 2001-2014թթ. ընթացքում (դրամ)								
		2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2014
1	“Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ	48.8	49.6	48.5	100.41	140	140	140	140	179.8
2	“Երևանի Ջրմուղկոյուղի”ՓԲԸ	56	56	56	90.2	125.1	125.1	-	-	-
3	“Երևան Ջուր”ՓԲԸ	-	-	-	-	-	172.8	172.8	172.8	170.3
4	“Լոռի-ջրմուղկոյուղի”ՓԲԸ	-	-	-	121.16	121.16	121.16	121.16	121.16	181
5	“Շիրակ-ջրմուղկոյուղի”ՓԲԸ	-	-	-	120.14	120.14	120.14	120.14	120.14	172.2
6	“Նոր Ակունք”ՓԲԸ	-	100	100	150.2	150.2	150.2	150.2	150.2	202.6

Դեֆիցիտը հիմնականում ֆինանսավորվում է կառավարության սեփականություն հանդիսացող միջոցներով (շուրջ 50 %) և կառավարության

[6] Կազմվել է <<Հայջրմուղկոյուղի>>, <<Երևան ջուր>>, <<Նոր ակունք>>, <<Լոռի>> և <<Շիրակ>> ՋևՋ ծառայություններ մատուցող ընկերությունների 2011 և 2012 թ.թ. հաշվետվությունների հիման վրա:

[7] Աղյուսակը կազմվել է ՀՀ կառավարության 17.05.2001թ. N440, 06.11.2003թ. N1693-Ն որոշումների, ՀՀ ՀԾԿՀ 27.02.2004թ. N 25-Ն, 27.02.2004թ. N 26-Ն, 27.007.2004թ. N89-Ն, 25.02.2005թ. N15-Ն, 22.03.2005թ. N26-Ն, 22.03.2005թ. N27-Ն , 25.02.2005թ. N16-Ն և 30.05.2006թ. N89-Ն, 2014- N 244Ն, 2015- N 221Ն, 2009- N 71Ն, 2010- N 58Ն, 2010- N 56Ն, 2010- N 57Ն որոշումների հիման վրա:

սուբսիդիաներով (շուրջ 30 %), որը բաղկացած է պլանավորված սուբսիդիաներից և տոկոսագումարներից ազատումից (գծապատկեր 5):

Գծապատկեր 5

ՀՀ կառավարության աջակցությունը ջրային ոլորտին (մլն ՀՀԴ)[8]



Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների սակագների հաշվարկի հիմքում դրված միջինացված ծախսային մեծություններում դեռևս բավականին մեծ տեսակարար կշիռ ունի էլեկտրաէներգիայի ծախսը, ցածր է բնապահպանական և բնօգտագործման վճարների մասը, վերանորոգման և պահպանման ծախսերը:

«Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտում սակագնային քաղաքականության բարեփոխման ուղիները» վերնագրով երրորդ գլխում վերլուծվում է Հայաստանի Հանրապետությունում ջրային համակարգերի կառավարման ոլորտում հանրային-մասնավոր գործընկերության կիրառման հնարավորությունները: Ուսումնասիրվում է ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտների ինստիտուցիոնալ կառուցվածքը, դրա առանձնահատկությունները, ինչպես նաև այդ կառուցվածքի, ջրային ռեսուրսների կառավարման պետական քաղաքականության և տնտեսական գործիքակազմի բարեփոխման ուղիները:

Ջրային ռեսուրսների կառավարման գործընթացում կարող են ներգրավված լինել տարբեր տիպի մարմիններ և կազմակերպություններ: Դրանց կազմում մտնում են շատ խոշոր միջազգային կազմակերպություններ, ինչպես նաև տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմիններ, հասարակական կազմակերպություններ և համայնքային կազմակերպություններ: Դրանց ցանկը յուրաքանչյուր երկրում կախված է տվյալ երկրի փորձից և առկա հնարավորություններից ու առանձնահատկություններից: Ներկայումս առավել արդյունավետ լուծումներ գտնելու և արդյունք ապահովելու նպատակով ջրային հարաբերություններում գործող կազմակերպությունները

[8] Գծապատկերը կազմվել է ՀՀ ԳՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի 2012-2015 թ.թ. հաշվետվությունների և առկա տեղեկատվության հիման վրա:

ենթարկվում են ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ կառուցվածքային փոփոխությունների:

ՀՀ-ում ջրային համակարգի օգտագործման իրավունքը կարող է փոխանցվել հետևյալ ձևերով՝ հավատարմագրային կառավարման հանձնելու միջոցով, կոնցեսիայի պայմանագրով, առևտրային կազմակերպության ստեղծումով, վարձակալությամբ[9]:

Միջազգային մասնավոր ջրային օպերատորները ներկայումս չեն ցանկանում տրամադրել զգալի ներդրումներ Հայաստանի նման փոքր շուկայում և նախընտրում են վարձակալության ձևը կոնցենսիայից: 2016 թվականին <<Երևան ջուր>> ընկերության վարձակալության պայմանագիրը և <<Հայջրմուղկոյուղի>> ընկերության ու մարզային երեք ընկերությունների կառավարման պայմանագրերը ավարտվում են: Ջրամատակարար կազմակերպությունների համար առաջարկվում է հետևյալ ինստիտուցիոնալ կառուցվածքը՝ գծապատկեր 6:

Գծապատկեր 6

Ջրամատակարար կազմակերպությունների առաջարկվող ինստիտուցիոնալ կառուցվածքը[10]



Մեկ օպերատորի ընտրությունը (15 տարի ժամկետով վարձակալության պայմանագիր) պայմանավորված է նրանով, որ ներկայումս տարբեր օպերատորների միջև առկա են միավոր ծախսերի, արդյունավետությունների և սակագների մակարդակների զգալի տարբերություններ: Այս տարբերակը հնարավորություն է տալիս ունենալ միասնական համապետական սակագին (սպասարկվող տարածքների համար) և ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց դեպքում մասշտաբի էֆեկտը կարող է հանգեցնել Երևանից դուրս գտնվող, ավելի մեծ ծախսեր պահանջող շրջաններում արդյունավետության բարձրացման:

[9] Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք, ՀՕ-373-Ն, ՀՀ պաշտոնական տեղեկագիր 2002/24 (199) 10.07.2002թ., հոդված 49:

[10] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից

Առաջարկվող ինստիտուցիոնալ տարբերակի դեպքում պահանջվող միասնական սակագնի տարբերակները անհրաժեշտ է քննարկել հասարակության հետ, ներկայացնել նաև ՀՀ ՄԺԾԾ ծրագրում: Հայտնի է նաև, որ լրանում են Հայաստանի Հանրապետությանը տրամադրած վարկային միջոցների արտոնյալ ժամկետները: Եթե դրան ավելացնելու լինենք նաև տոկոսավճարները, ապա կտրուկ բարձրանում են սակագները, ինչը անխուսափելի է: Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքում ստացվում է հետևյալ պատկերը, որը ներկայացված է գծապատկեր 7-ում:

Գծապատկեր 7

Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների համար պահանջվող միասնական սակագնի աճի դինամիկան[11]



Այնուամենայնիվ առաջարկվող տարբերակի հետ կապված կան որոշակի ռիսկեր, մասնավորապես ոլորտում մրցունակության թուլացման և չսպասարկվող համայնքների պարտադիր ներգրավման դժվարության պատճառով:

Այս խնդիրների լուծման համար կարևորվում են պետության կողմից գույքի կառավարչի և կարգավորող մարմնի ռեսուրսների, դիրքի և իրավասությունների ուժեղացում այնպես, որպեսզի նրանք կարողանան արդյունավետ կերպով հակազդել մեկ ազգային օպերատորի՝ մենաշնորհային մեծացող կարողությանը: Այս միջոցառումների արդյունքում պետական ներդրումային միջոցները կօգտագործվեն ավելի արդյունավետ (2016թ.-ից մինչև 2031թ. համար ներդրումները մոտավորապես կկազմեն 300 միլիարդ ՀՀԴ կամ միջինում 20 միլարդ ՀՀԴ/տարեկան)[12]: Ներդրումների բաշխման ժամանակ ավելի մեծ ուշադրություն պետք է դարձվի ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման տարածքներից դուրս գտնվող համայնքների ջրամատակարարմանը և ջրահեռացմանը, և ավելի քիչ

[11] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից ՀՀ ԳՆ ՋՏՊԿ-ի նյութերով:

[12] ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից 13.08.2015թ. N38 քաղվածք:

ուշադրություն ջրամատակարար կազմակերպությունների կողմից սպասարկվող տարածքների ջրամատակարարմանը և ջրահեռացմանը:

Եզրակացությունների բաժնում ներկայացված են հետազոտության արդյունքում բացահայտված հիմնախնդիրները և դրանց լուծման ուղղությամբ մշակված առաջարկությունները: Դրանցից հիմնականները կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ՝

1. Ջրային ռեսուրսները և ջրային համակարգերը կարևոր դեր են խաղում յուրաքանչյուր երկրի տնտեսության կայուն զարգացման համար և դրանց արդյունավետ կառավարումը լուրջ խնդիր է գրեթե բոլոր պետությունների համար: Պետք է նշել, որ մեր հանրապետությունում կան բավարար քանակությամբ ջրային ռեսուրսներ, ուղղակի անհրաժեշտ է դրանց ռացիոնալ օգտագործումը և կառավարումն իրականացնել արդյունավետ տնտեսական լծակների կիրառմամբ:

2. Հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ ՀՀ-ում բնապահպանական և բնօգտագործման վճարները համարժեք չեն շրջակա միջավայրին պատճառվող վնասներին, ինչպես նաև օրենքով նախատեսված չէ դրանց պարբերական վերանայումը ինֆլյացիայի գործոնի հաշվառմամբ: Անհրաժեշտ է, որ դրանց հաշվարկման հիմքում ընկած լինի շրջակա միջավայրի աղտոտման արդյունքում և հետևանքով առաջացող լրիվ տնտեսական վնասի մեծությունը:

3. Ջրի համապարփակ գնահատումը կնպաստի համարժեք ռեսուրսավճարների և սակագների սահմանմանը, որն էլ իր հերթին կհանգեցնի նաև ջրային ռեսուրսների պահպանմանը, ռացիոնալ օգտագործման՝ կայուն զարգացման նպատակների իրագործման տեսանկյունից:

4. Բնօգտագործման վճարները ջրային ռեսուրսների ոլորտում սակագների կառուցվածքում փոքր մաս են կազմում, իսկ որոշ դեպքերում ընդհանրապես չեն ներառվում, ինչը վկայում է այն մասին, որ դրանք լիարժեք չեն հաշվարկված՝ ելնելով սոցիալական և տնտեսական նկատառումներից: Մեր կարծիքով հիդրոէներգետիկայի ոլորտի համար բնօգտագործման վճարի սահմանումը կնպաստի ջրային ռեսուրսների պահպանությանը և ռացիոնալ օգտագործմանը:

5. Շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերը բավականին փոքր տեսակարար կշիռ ունեն պետական բյուջեի ընդհանուր ծախսային հատվածում և նույնիսկ դրսևորում են նվազման միտումներ այն պարագայում, երբ տարեցտարի նկատվում է պետական բյուջեի ընդհանուր ծախսերի աճ: Շրջակա միջավայրի պաշտպանության նպատակաուղղված հատկացումների մեջ առավել մեծ տեսակարար կշիռը պատկանում է կենսաբազմազանության և բնության պաշտպանության ուղղությամբ կատարվող ծախսերին: Նպատակահարմար է պետական բյուջեի շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարի դասում

ներառել նաև ջրերի և հողերի աղտոտման դեմ ուղղված միջոցառումների ցանկն և ապահովել դրանց ֆինանսավորումը:

6. Ուսումնասիրելով ջրամատակարարման և ջրահեռացման միջազգային փորձը կարելի է փաստել, որ կարևորվում է միջհամայնքային համագործակցության արդյունավետությունը, խոշոր ենթակառուցվածքների վերակառուցման դեպքում կեղտաջրերի մաքրման և ջրամատակարարման ոլորտներում <<անարդյունք ներդրումներ>> ունենալու բարձր ռիսկը, մեկ ջրամատակարար օպերատորի ներգրավման նպատակով՝ բնապահպանական և տնտեսական կարգավորող մարմինների կարողությունների հզորացումը և ինստիտուցիոնալ հզորացման միջոցառումները, որոնք կարող են օգտակար լինել ծախսերի հիմնավորման և հետևապես դրանք նվազեցնելու գործում:

7. Բավականին լավ է զարգացած ջրային ռեսուրսների ուղղակի և անուղղակի օգտագործման մի քանի տեսակների արժեքային գնահատումը: Թերևս, անուղղակի ծառայությունների շատ տեսակների արժեքային գնահատումը բավարար չափով զարգացած չէ: Քանի որ այդ ծառայություններն ընդգրկված չեն ջրային ռեսուրսների հաշվարկի մեջ:

8. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների սակագների հաշվարկի հիմքում դրված միջինացված ծախսային մեծություններում դեռևս բավականին մեծ տեսակարար կշիռ ունի էլեկտրաէներգիայի ծախսը, ցածր է բնապահպանական և բնօգտագործման վճարների մասը, վերանորոգման և պահպանման ծախսերը:

Անհրաժեշտ է ծախսածածկող սակագնին անցում՝ սակագնի մեջ ներառելով նաև ամորտիզացիոն հատկացումներ և շահույթի որոշակի մաս:

9. Ջրի սակագների սահմանման գլխավոր շարժառիթն ընկերություններին հնարավորություն տալն է, որ վերադարձնեն ջրամատակարարման և ջրառեռացման ծառայությունների մատուցման ընթացքում առաջացած ծախքերը: Բացի ծախքերի վերադարձելիությունից, կան այլ կարևոր սոցիալական, քաղաքական և բնապահպանական նկատառումներ, որոնք հարկ է հաշվի առնել սակագները նախագծելիս:

10. Ըստ կառուցվածքի տարբերում են սակագների հետևյալ տարբերակները՝ միասնական ծավալային սակագին, ոչ-միասնական ծավալային սակագին, ըստ օգտագործման սանդղակավորված ծավալի աճող սակագին, երկմաս (երկռեժիմ) սակագին: Այս տարբերակներից յուրաքանչյուրն ունի առավելություններ և թերություններ, որոնք պետք է հաշվի առնվեն սակագների նախագծման ժամանակ: Սակագները պետք է նախագծված լինեն այնպես, որ թույլ տան ընկերությանը բավարարել անհրաժեշտ հասույթը: Միաժամանակ սակագնի մեջ անհրաժեշտ է ներառել միայն արդյունավետ (երբեմն <<ողջամիտ>> կոչվող) ծախքերը:

11. Մեր հանրապետությունում սակագները ցածր են, ինչը հանգեցնում է ջրամատակարարման ընկերություններից ֆինանսական կենսունակության անկմանը, ինչը բավարար չէ ոլորտի հետագա ներդրումային կարիքները հոգալու համար: Սակագներից ստացվող եկամուտը ծածկում է շահագործման ծախսերի շուրջ կեսից ավելին, տարեկան կտրվածքով առաջացնելով շուրջ 6 միլիարդ դրամի պակասուրդ, որը հիմնականում ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի կողմից տրամադրվող սուբսիդիաներից և տրամադրված արտոնություններով, մասնավորապես՝ ազատում տոկոսագումարներից :
12. Հանրային-մասնավոր գործընկերության բնագավառում մեր հանրապետությունում դեռևս կան խնդիրներ, <<օրենսդրական բացեր>>, որոնց լուծումը կնպաստի ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի առավել արդյունավետ կառավարմանը: Մասանվորապես չկան <<Հանրային-մասնավոր գործընկերության մասին>> և <<Կոնցեսիայի մասին>> ՀՀ օրենքներ: Ավելին նախքան հանրային-մասնավոր համագործակցության հաստատումը նախատեսված չէ համապատասխան ընթացակարգ, որով հնարավոր կլինի վերջնական սպառողների և հանրության միջև քննարկման ապահովում:
13. Միջազգային փորձը դիտարկելիս և ՀՀ-ում դրա տեղայնացման հնարավորությունը վերլուծելիս պարզ է դառնում, որ հանրային-մասնավոր համագործակցության շրջանակներում շուկայում ակտիվ միջազգային ջրային օպերատորներ հետաքրքրված չեն Հայաստանում կոնցենսիայի պայմանագրի կնքմամբ, սակայն հետաքրքրված են վարձակալության պայմանագրով, քանի որ չեն ցանկանում տրամադրել զգալի ներդրումներ Հայաստանի նման փոքր շուկայում, ինչը նախատեսված է կոնցեսիոն պայմանագրով և նախընտրում են վարձակալության ձևը կոնցենսիայից:
14. Կարևորելով ՀՀ-ում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի ռազմավարական նշանակությունը և դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը կարևորվում է մեկ միասնական մոդելով (վարձակալության պայմանագիր՝ 15 տարով) կառավարելու տարբերակի ներդրումը, որը հնարավորություն է տալիս ունենալ միասնական համապետական սակագին (սպասարկվող տարածքների համար) և ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց դեպքում մասշտաբի էֆեկտը կարող է հանգեցնել Երևանից դուրս գտնվող, ավելի մեծ ծախսեր պահանջող շրջաններում արդյունավետության բարձրացում:
15. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում ֆինանսավորման կարիքները զգալիորեն գերազանցում են հասանելի ֆինանսական միջոցներին և ռեսուրսներին: Հետևաբար, ներդրումների համար պետք է սահմանվեն առաջնահերթություններ՝ կենտրոնանալ գույքի հետագա քայքայումից խուսափելու վրա, որպեսզի կանխվի հետագա վերակառուցման ծախսերի անհրաժեշտությունը, իրականացնել առաջնահերթ ներդրումներ (օրինակ, ջրաչափման համակարգի բարելավման մասով, ջրահեռացման

ծառայությունների բարելավման ուղղությամբ, մասնավորապես ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման տարածքներից դուրս գտնվող համայնքների տարածքներում):

16. Խմելու և ոռոգման համակարգերի գույքի կառավարման և ներդրումների իրականացման գործառույթների գործուն կազմակերպումը իրականացնելու համար նպատակահարմար է ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի կառուցվածքում գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչության ստեղծումը, որը կկարգավորի ընդհանուր օգտագործման օբյեկտների, օրենսդրորեն հստակորեն չտարանջատված գործառույթների, գույքի շահագործման նորմերի պահպանման և պահանջվող ստանդարտներին համապատասխան ներդրումներ իրականացնելը: Ինչպես նաև, ուսումնասիրելով պետական մասնավոր գործընկերության շրջանակներում ներկայացված առաջարկությունները, կիրականացնի ոլորտի զարգացման ռազմավարական պլանների և առևտրային գործունեություն իրականացնող կազմակերպությունների գույքի համալրման խոշոր, կապիտալ ներդրումային ծրագրերի մշակումը, ներդրումների ուղղությունների և ծավալների սահմանումը, օպերատորների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման հսկողությունը, ծառայությունների որակի գնահատումը, ինչպես նաև այդ կազմակերպությունների տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված գույքի կադաստրի վարումը:

17. Մեր հանրապետությունում, հատկապես գյուղական տարածքներում ջրամատակարարման համեմատ, ջրահեռացման ծառայությունների բարելավման հարցերը երկրորդ պլան են մղվել: Կեղտաջրերի մաքրման կայանները քիչ են, որոնք հիմնականում մեխանիկական մաքրում են իրականացնում, իսկ սակագնի մեջ ջրահեռացման բաժինը վերաբերում է զուտ ջրահեռացմանը և ջրերի մեխանիկական մաքրմանը: Ջրահեռացման իրավական կարգավորումը ջրամատակարարման հետ միաժամանակ իրականացվում է մի շարք օրենքներով: Հիմնական իրավական ակտերը ՀՀ Սահմանադրությունը և ՀՀ ջրային օրենսգիրքն են, իսկ մյուս իրավական ակտերը հիմնված են դրանց վրա և ի կատարումն դրանց: Կարծում ենք, որ ջրահեռացման համակարգի առանձնահատկությունները պետք է առանձնակի ուշադրության արժանանան և կարգավորվեն: Իրավական տեսանկյունից ավելի նպատակահարմար կլիներ ջրահեռացման կարգավորմանը նվիրված լիներ ՀՀ ջրային օրենսգրքի առանձին գլուխ կամ կարգավորվի առանձին օրենքով:

18. Հայաստանի ջրային ոլորտի վերաբերյալ շատ ուսումնասիրություններ վկայում են, որ հասույթ չբերող կամ ոչ եկամտաբեր ջրի էական մասը կապված է ջրաչափերի անճշտությունների և շենքերի ներքին ցանցում կորուստների հետ: Առևտրային կորուստները նվազեցնելու նպատակով՝ ջրաչափերի բարելավումը

(ստուգաչափում, փոխարինում և ցուցմունքները գրանցելու բարելավված պայմաններ) համարվում է առաջնահերթություն: Ջրաչափերի փոխարինման ծախսերը պետք է կրեն ջրամատակարարման ընկերությունները, իսկ գոյություն ունեցող և նոր ջրաչափերի տեղադրման և ստուգաչափման ծախսերը պետք է արտացոլվեն ջրի սակագներում:

19. Ակնհայտ է, որ սակագների անսպասելի բարձրացումը ներկա մակարդակից մինչև ծախսերի վերադարձելիության մակարդակ կարող է առաջ բերել <<սակագնային ցնցում>> կամ ջուրը չափազանց թանկ դարձնել անապահով տնային տնտեսությունների համար: Այս խնդրի լուծման համար պետությունը պետք է տրամադրի հասցեական սուբսիդիաներ: Սուբսիդիաները կարելի է տրամադրել ուղղակիորեն բաժանորդներին՝ դրամական միջոցների փոխանցմամբ կամ որպես զեղչեր բաժանորդների ջրի հաշվից:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Ջանգոզյան Վ. Վ. <<Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի խնդիրները և լուծման ուղիները>>, «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր», Ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային 3-րդ գիտաժողով, Նյութերի ժողովածու, ԵՊՀ ԵԳՄ, Երևան, 2015, -300 էջ, էջ՝ 129-134:
2. Ջանգոզյան Վ. Վ. <<Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում պետություն-մասնավոր համագործակցությունը>>, Այլընտրանք գիտական հանդես, Երևան, Հուլիս-սեպտեմբեր, 2015#3, -326 էջ, էջ՝ 127-135:
3. Ջանգոզյան Վ. Վ. <<Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ինստիտուցիոնալ բարեփոխումները ՀՀ-ում>>, Ագրոգիտություն գիտական ամսագիր, Երևան, 1-2 (689-690)/2016, -66 էջ, էջ՝ 16-19:
4. Ջանգոզյան Վ. Վ. <<Ջրամատակարարման և ջրահեռացման ինստիտուցիոնալ բարեփոխումների միջազգային փորձի ուսումնասիրություն>>, ՀՀ տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, գիտական հոդվածների ժողովածու-1(23), Երևան, <<Անանիա Շիրակացի>> միջազգային հարաբերությունների համալսարան, 2016, - 475 էջ, էջ՝ 354-360:

ВАРДАН ВЛАДИМИРОВИЧ ДЖАНГОЗЯН

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ЦЕНООБРАЗОВАНИЯ В СФЕРЕ ВОДОСНАБЖЕНИЯ И ВОДООТВЕДЕНИЯ (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – „Экономика, управление хозяйством и его сферами''.

Защита диссертации состоится 9-го июня 2016 г. в 15^{30} часов, на заседании Специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

С экологической точки зрения плата за необоснованное использование воды, а также тарифы в сфере водоснабжения и водоотведения приводят к таким негативным последствиям, как неэкономичное и нерасчетливое применение и распределение водных ресурсов и водных систем, что, в свою очередь, происходит без учета их экологической ценности, а также будущих затрат на их восстановление и дальнейшее применение.Следовательно, проблему управления и контроля водных ресурсов и водных систем следует рассматривать, в первую очередь, в научном контексте, направленном на методологическое совершенствование тарифов в сфере водоснабжения и водоотведения. Соответственно, в таком случае новые тарифы окажутся социально более приемлемыми, экономически обоснованными и экологически оправданными.

Основная цель исследования. Целью исследования данной диссертации является изучение и анализ основных проблем ценообразования в сфере водоснабжения и водоотведения Республики Армения, а также выделение научно обоснованной методологии ценообразования с экономико-экологической точки зрения.

Для достижения поставленной цели в данной диссертации были поставлены и решены следующие задачи:

- изучение текущего состояния водоснабжения и водоотведения, а также выявление особенностей развития данной сферы в Республике Армения;

- анализ методологии ценообразования в сфере экологии и природопользования, раскрытие основных проблем, определения данных тарифов в Республике Армения;

- анализ сферы водоснабжения и водоотведения на примере мирового опыта;

- исследование институциональной структуры и особенностей сферы водоснабжения и водоотведения, а также представление предложений, направленных на совершенствование данных структур;

- исследование структуры, государственного регулирования и методологии определения текущих тарифов для компаний, работающих в сфере водоснабжения и водоотведения, а также представление предложений по их совершенствованию;

- рассмотрение возможностей и перспектив участия частных компаний в управлении водными системами, а также обоснование целесообразности способа передачи права использования водных систем в сфере водоснабжения и водоотведения;

Научная новизна диссертационной работы. Основные результаты данной работы имеют теоретическое, методическое и прикладное направление, научная новизна которых заключается в следующем:

1. Обоснована необходимость изменения формы управления в рамках сотрудничества государственных и частных водоснабжающих компаний, а также установлена оптимальная структура, согласно которой предлагается инвестировать в единый (универсальный) тариф водоснабжения. С целью определения данного тарифа была разработана прогнозная модель, основанная на прогнозе необходимой прибыли.

2. Предложено изменить институциональную структуру управления водными ресурсами, в частности, создание отдельной единицы в составе управленческого органа, которая будет способствовать рациональному управлению активами компаний, задействованных в сфере водоснабжения и водоотведения. Кроме того, предложенная структура будет осуществлять стратегические функции.

VARDAN JANGOZYAN VLADIMIR

ISSUES OF TARRIFF FIXING IN WATER SUPPLY AND SANITATION AREAS (BASED ON RA MATERIALS)

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 – "Economics, Management of Economy and its Spheres".

The defense of the thesis will take place on June 9, 2016 at 15^{30} o'clock, at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 Nalbandyan str., Yerevan, Armenia, 0025.

Abstract

From ecological-economic prespective baseless fees of water usage and tariffs on water supply and sanitation have negative impacts which lead to wasteful usage of water resources without taking into account their recovery and utilization costs, as well as ecological requirements. Thus the issue of water resources and water system management and supervision should be considered especcialy in such scientific context which aims to improve the methodology of tariff fixing in water supply and sanitation areas making the tarriffs to become socially acceptable, economically grounded and ecologically justified.

The main goal of research is to research and analyze the issues of tariff fixing in water supply and sanitation areas of the Republic of Armenia and to propose scientifically profound approach of tariff defining from ecological-economic viewpoint.

To reach the mentioned goal the following tasks have been set and solved in the research:

- To explore the of water present condition supply and sanitation spheres and to reveal its development specifics in the Republic of Armenia.
- To analyze the methology of environmental and resource usage charge fixing, to expose issues of their defining in the Republic of Armenia.
- To make analysis on international practice of water supply and sanitation areas.

- To investigate institutional structure and spesifics of water supply and sanitation areas, as well as to suggest recommendations on improvement of that structure.

- To review the tariff structure, government regulation, methodology of definition for the companies which operate in water supply and sanitation areas and to present recommendations on their improvement.

- To examine the possibility and perspectives of private companies' participation in governance of water systems and to substantiate expedience of transmission form of water systems utilization rights in water supply and sanitation spheres.

Scientific novelty of the research.

The main results of the thesis have economic, methodical and practical direction, which scientific novelty is the following:

1. In terms of public-private cooperation establishment of the requirement to change management type of water supply companies and to optimize the structure by investing water supply and sanitation universal tariff. In order to define the tarriff there was developed a model of tarriff prediction based on prediction of revenues demand.

2. Change in water resource management institutional structure, particularly creation of a separate unit in water systems management body, which will dispose all the resources of water supply and sanitation companies and will carry strategic function.